

Երկրորդ հատորում

**Ժառանգել համարվանդակ Քրիստոսին՝  
որպես բարի երկրի՝  
անսալով խորհրդի ու նախագուշացումների Նրա խոսքերին  
և ընդունելով Նրա նորոգված ուսուցումը,  
որպեսզի մեր ներքին մարդը օրեցօր նորոգվի**

Գրվածքների ընթերցում. Եբր 3:12, 16-19, 4:2, 6, 11:1, Ա Կրթ 10:1-14,  
Սղմ 106:24-25, Երկ օր 8:3, Մտք 4:4

**I. Իսրայելի զավակներին Աստծու կանչելու նպատակն այն էր, որ նրանք  
մտնեին խոստացված երկիրը և վայելեին դրա հարստությունը, որպեսզի  
հաստատեին Աստծու թագավորությունը և լինեին երկրի վրա Աստծու ար-  
տահայտությունը՝ Ելց 3:8, 14, 17.**

Ա. Թեև ամբողջ Իսրայելը փրկագնվել էր զատկի միջոցով, ազատվել եգիպ-  
տական բռնակալությունից և բերվել Աստծու լեռան մոտ՝ Աստծու բնա-  
կատեղի՝ խորանի հայտնությունը ստանալու համար, գրեթե բոլորն  
ընկան ու մահացան անապատում՝ իրենց չար գործերի և անհավա-  
տության պատճառով չհասնելով այդ նպատակին (Եբր 3:7-19):

Բ. Սա նշանակում է, որ թեև մենք փրկագնվել ենք Քրիստոսի միջոցով,  
ազատվել Սատանայի կապանքներից ու բերվել Աստծու տնտեսության  
մասին հայտնությանը, հնարավոր է, որ չհասնենք Աստծու կանչելու  
նպատակին, այսինքն՝ տիրելու մեր բարի երկրին՝ Քրիստոսին, և վայե-  
լելու Նրա հարստությունը Աստծու թագավորության համար, որպեսզի  
Նրա արտահայտությունը լինենք ներկա դարաշրջանում և մասնակ-  
ցենք Քրիստոսի լիակատար վայելքին թագավորության դարաշրջա-  
նում՝ Մտք 25:21, 23:

Գ. Միայն Քաղերն ու Հեսուն հասան նպատակին և մուտք գործեցին բարի  
երկիրը. Քաղերի և Հեսուի նման մենք՝ նորկտակարանյան հավատաց-  
յալներս, պետք է «նպատակին ձգտենք» (Քրիստոսին ամենալեցուն  
կերպով վայելելն ու ձեռք բերելը) «մրցանակի համար» (Քրիստոսին հա-  
զարամյա թագավորության մեջ առավելագույն չափով վայելելը)՝ Թվց  
14:27-30, Փլյ 3:12-14.

1. Մովսեսի՝ երկիրը լրտեսելու համար ուղարկած տասներկուսից տա-  
սը չար լուր բերեցին, ինչի պատճառով Իսրայելի զավակները սկսե-  
ցին տրտնջալ ու ապստամբել Տիրոջ խոսքի դեմ, բայց Քաղերն ու  
Հեսուն ամբողջ ժողովքին ասացին. «Միայն թե Եհովայի դեմ մի՛  
ապստամբեք, ոչ էլ այդ երկրի ժողովրդից [ենակացիներից] վախե-  
ցեք, որովհետև նրանք մեր հացն են»՝ Թվց 14:9:

2. Աստծու խոսքը մեր հացն է (Մտք 4:4). Աստծու կամքը մեր կերա-  
կուրն է (Հվի 4:34). և մեր հացն են նաև ենակացիները (Թվց 14:9),  
որոնք ներկայացնում են թվացյալ անհաղթահարելի խոչընդոտները

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

և անելանելի իրավիճակները եկեղեցու կառուցման համար Քրիստոսին մեր ձգտելու մեջ:

3. Բոլոր դժվարություններն ու գայթակղությունները, որոնք Սատանան ուղարկում է մեր ճանապարհին, կերակուր են մեզ համար. սա հոգևոր առաջընթացի համար Աստծու նախասահմանած միջոցն է (Ա Տմթ 4:15-16). եթե ապավինենք այն բանին, որ Տերը մեզ հաղթանակ է տալու, և թույլ տանք, որ Նրա հաղթանակող կյանքը դրսևորվի մեր մեջ, թարմ սնուցում և մեծացված կենսականություն կգտնենք (Հս 14:11-15):
4. Որպեսզի ունենանք Աստծու պահող զորությունը, պետք է վարժենք հավատքի մեր հոգին, որպեսզի ամբողջ սրտով հավատանք Նրա խոստումներին (Բ Կրթ 4:13, 3:16, 1:20), հավատանք, որ Նա Իր ժողովրդի հետ է, և հավատանք, որ նրանք միանգամայն կարող են հաղթել (Հս 14:12-15, Թվց 13:30). մենք պետք է մեր շնչերը որպես ներդրում հանձնենք Աստծուն՝ հավատարիմ Արարչին (Ա Պտ 4:19), մեզ տանք Նրան և Նրան հանձնարարենք մեր կյանքը պահելը (Բ Տմթ 1:12):
5. Եթե ապավինենք Նրա խոստումներին և մեզ ամբողջովին հանձնենք Նրան, կպահվենք այս օրվանից սկսած մինչև Նրա վերադարձի օրը. Նա կարող է մեզ գայթելուց պահպանել և Իր փառքի առջև անարատ կանգնեցնել ցնծության մեջ՝ Հղ 24:
6. Եթե պատրաստվում ենք լիովին տիրելու Քրիստոսին՝ որպես բարի երկրի, մենք պետք է զգուշանանք անհավատության չար սիրտ ունենալուց. Տիրոջը չհավատալ նշանակում է Նրա դեմ ապստամբել՝ Երկ օր 1:25-26, 28, 35-39, 9:23, Եբր 3:12, 16-19, 4:2, 6, 11:1, հմմտ Բ Կրթ 4:13, Գղտ 3:2, 5, Հռմ 10:17, Գրծ 6:5ա, Թվց 13:25-33, 14:4-10, 32:11-12, Հս 14:6-12, Ա Կրթ 10:1-13:
7. Եթե պատրաստվում ենք լիովին տիրելու Քրիստոսին՝ որպես բարի երկրի, պետք է զգուշանանք տրտունջներից (դժգոհ և ծածուկ փնթփնթոցներից, քրթմնջյուններից և բողոքներից). տրտունջները անպարզահունչ, խուլ ձայնով արտաբերված բողոքն են՝ ասված դժգոհության հնչերանգով և դառը վրդովմունքով՝ Խ. 10, Սղմ 106:24-25, Փլպ 2:14:

**II. Եթե պատրաստվում ենք լիովին տիրելու Քրիստոսին՝ որպես բարի երկրի, Պողոս առաքյալն ասում է, որ մենք պետք է «փախչենք կռապաշտությունից» (Ա Կրթ 10:14). սա մատնանշում է Իսրայելի զավակների կռապաշտությունը ոսկե հորթին երկրպագելիս (Ելց 32:1-6).**

Ա. Ոսկե հորթը Աստծու փրկագնած ժողովրդի կողմից պատրաստած կուռք էր. վեր կենալ խաղալու նշանակում է շվայտության տրվել (կամ բուռն խրախճանքի). մեր սրտի կուռքը մեր ներսում այն ամենն է, ինչ ավելի շատ ենք սիրում, քան Տիրոջը, և ինչ փոխարինում է Տիրոջը մեր կյանքում (Եզկ 14:3). որպես իսկական Աստծու իսկական զավակներ՝ մենք

ԺԱՌԱՆԳԵԼ ՀԱՍԱԲՈՎԱՆԴԱԿ ՔՐԻՍՏՈՍԻՆ

պետք է աշալուրջ լինենք և մեզ պահենք կուռքերից (Ա Հվի 5:21)՝ մեր կյանքում Քրիստոսի բոլոր փոխարինումներից և փոխարինիչներից:

Բ. Մենք պետք է որպես զգուշացում ընդունենք ոսկե հորթի՝ որպես կուռքի սկզբունքը՝ Աստծու փրկագնաժ ժողովրդի պատրաստած կուռքի, ինչը նրանց կռապաշտական բանակ դարձրեց. կռապաշտությունը հինգ սկզբունք է ներառում՝ Ա Կրթ 10:5-7.

1. Ինքնագեղեցկացումը հանգեցնում է կռապաշտության (Ելց 32:1-4, 33:5-6, Ծնդ 35:1-4). մեր գեղեցկությունն Աստված է, Նա գեղեցկացնում է եկեղեցին՝ որպես Իր գեղեցկության տունը, որպեսզի Ինքը գեղեցկանա (Եսայ 60:7, 19, 21, Եփս 5:26-27). մեր «ես»-ի արտահայտության մեջ առկա է բաժանություն, իսկ Աստծու ընդհանրական արտահայտության՝ աստվածային փառքի մեջ առկա է միասնություն (Հվի 17:22-24). մեր աշխատանքը մեր ապրելակերպն է, որն ուղղված է երկրի վրա Աստծուն փառավորելուն՝ արտահայտելուն (Խ. 4, Ա Կրթ 10:31, Եսայ 43:7), և մեր խոսելու մեջ մենք չպետք է մեր սեփական փառքը փնտրենք՝ քարոզելով մեզ. ընդհակառակը, մենք պետք է քարոզենք Քրիստոս Հիսուսին՝ որպես Տիրոջ, իսկ մեզ՝ որպես ստրուկների, որոնք ծառայում են հավատացյալներին (Հվի 7:17, Բ Կրթ 4:5):

2. Կռապաշտությունը Սատանայի բռնազավթելն է այն, ինչ Աստված տվել է մեզ, որպեսզի դա ծախսի անօգուտ տեղը. դա մեր չարաշահելն է այն, ինչ Աստված մեզ տվել է, և Աստծու շնորհները՝ նյութական թե հոգևոր, չօգտագործելը Աստծու մտահոգացման համար. Աստծու կողմից եզիպտացիների միջոցով Իսրայելի զավակներին նախքան Եգիպտոսից նրանց ելքը տված ոսկին պետք է օգտագործվեր խորանի կառուցման համար. սակայն նախքան ոսկին կօգտագործվեր Աստծու մտահոգացման համար, այն բռնազավթվեց Սատանայի կողմից և օգտագործվեց Աստծու ժողովրդի կողմից կուռք պատրաստելու համար՝ Ելց 11:2-3, 12:35-36, 25:2-8, 35:4-9:

3. Կռապաշտությունն այն բաների երկրպագությունն է, որոնք մենք վայելում ենք, հրճվանքների և զվարճանքների երկրպագությունը. այն՝ մենք վայելում ենք Տիրոջը, բայց դա աշխարհիկ հրճվանքի ու զվարճանքի տեսակ չէ՝ 32:6, 18-19, հմմտ Սղմ 36:8-9.

ա. Պողոսն այսպես է զգուշացնում կորնթացիներին. «Եվ կռապաշտներ մի՛ դարձեք, ինչպես նրանցից ոմանք. ինչպես գրված է. «Ժողովուրդը նստեց ուտելու և խմելու, և կանգնեցին խաղալու» (Ա Կրթ 10:7, Ելց 32:6). Չարիզ Քոուրսն ասում է, որ նրանք սպորտային մրցումներ էին կազմակերպում. հանգստյան օրերին շատ մարդիկ հոգ են տանում միայն ուտելու, խմելու և սպորտի համար:

բ. «Խաղալ» նշանակում է զվարճանալ, կատակել, ինչպես նաև դերասանությամբ զբաղվել, բեմի վրա խաղալ կամ անլուրջ կերպով

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

ինչ-որ բան խոսել. «խաղալ» նշանակում է ուրախ ու անկաշկանդ վարվել. այն նշանակում է դատարկ ժամանցի տրվել, այսինքն՝ անգուսպ զվարճանքի:

4. Կռապաշտությանը հատուկ է ձևական երկրպագությունը ճշմարիտ Աստծուն՝ խխ. 4-6, Գ ԹԳ 12:26-30, հմմտ Մտթ 4:8-11, Հվի 4:23-24:
5. Կռապաշտությանը հատուկ է խառնուրդը երկրպագության մեջ՝ Ելց 32:4-6, 21-24, հմմտ Ա Կրթ 3:12:

Գ. Այն բանից հետո, երբ Իսրայելի զավակները երկրպագեցին ոսկե հորթին, Մովսեսը գիտակցեց, որ Տիրոջ ներկայությունն այլևս չի լինելու ժողովրդի միջավայրում, ուստի նա իր վրանը հանեց և այն բանակատեղից որոշակի հեռավորության վրա խփեց. արդյունքում նրա վրանը դարձավ Աստծու վրանը, որովհետև և՛ Տիրոջ ներկայությունը, և՛ Նրա խոսելն այնտեղ էին՝ Ելց 33:7-11:

Դ. Այն բանից հետո, երբ Մովսեսը հանեց իր վրանն ու այն առանձնացրեց կռապաշտական բանակատեղից, Տերը Մովսեսի հետ երես առ երես էր խոսում, ճիշտ ինչպես մարդն է իր ընկերոջ հետ խոսում (խխ. 11, 14). Աստված ու Մովսեսն ընկերներ էին, գործակիցներ, գործընկերներ, որոնք նույն գործն էին անում ու մեծ ձեռնարկության մեջ ընդհանուր շահերը կիսում. Մովսեսն Աստծու հետ մտերիմ էր, և նա մեկն էր, ով ճանաչում էր Աստծու սիրտը, ով Աստծու սրտի համաձայն էր և կարողանում էր հպվել Աստծու սրտին:

### **III. Աստված Մովսեսի միջոցով նորոգված ուսուցում տվեց Իսրայելի զավակների նոր սերնդին նրանց երկարատև թափառումից հետո, որպեսզի նրանց պատրաստեր Աստծու խոստացած բարի երկիրը մտնելուն և այն որպես իրենց սեփականությունը ժառանգելուն. այն բանից հետո, երբ առաջին սերունդը՝ բացառությամբ Քաղեբի և Հեսուի, ամբողջությամբ մեռավ, երկրորդ սերունդը պատրաստ եղավ մտնելու բարի երկիրը և տիրելու դրան.**

Ա. Առաջին սերունդը մեր հին մարդու նախատիպն է, իսկ երկրորդ սերունդը՝ մեր նոր մարդու նախատիպը՝ Երկ Օր 2:14, 8:6-10, Ելց 3:8, Կդս 1:12.

1. Մենք պետք է լինենք մարդիկ, որոնք աճում են կյանքում՝ մտնելով համաբովանդակ Քրիստոսին՝ Աստծու խոստացած երկրին, լիովին տիրելու և վայելելու մեջ. փոխակերպումը հին մարդու մեռնելն է և նոր մարդու աճելը. Աստծու տնտեսությունը մեր հին մարդու (արտաքին մարդու) սպառվելն է և մեր նոր մարդու (ներքին մարդու)՝ օրեցօր նորոգվելը՝ Բ Կրթ 4:16:

2. Տիրոջ ողորմությամբ և շնորհքով այն պահից, երբ մենք եկանք Տիրոջ վերականգնում, մենք կյանքում մեր աճի և կյանքում փոխակերպվելու համար նորոգվելու գործընթացում ենք, ինչը մեզ մտցնում է Քրիստոսի՝ որպես մեր բարի երկրի վայելքի մեջ Աստծու կառույցի և թագավորության համար՝ 3:18, Հռմ 12:2:

Բ. Կյանքում մեր փոխակերպումը տեղի է ունենում այն բանին զուգընթաց, որ մենք թույլ ենք տալիս, որ Քրիստոսի խոսքը հարուստ կերպով բնակ-

## ԺԱՌԱՆԳԵԼ ՀԱՍՏԱԲՈՎԱՆԴԱԿ ՔՐԻՍՏՈՍԻՆ

վի մեր մեջ (Կդս 3:16). Երկ Օր 8:3-ում ասվում է, որ «մարդը միայն հացով չի ապրում, այլ մարդն ապրում է ամեն բանով, որ դուրս է գալիս Եհովայի բերանից». Մտք 4:4-ում «ամեն բանը» բառերը փոխարինված են «ամեն խոսքով» արտահայտությամբ.

1. Աստվածաշնչում եղող բոլոր խոսքերն Աստծու շնչառությունն են և վերաբերում են Քրիստոսին, ով Աստծու Խոսքի հանրագումարն է (Հվի 1:1, Հյտ 19:13)՝ որպես Աստծու մարդկանց կյանքն ու կենսամատակարարումը. Աստծու բերանով ելնող ամեն խոսքով ապրել նշանակում է ապրել Քրիստոսով՝ աստվածային շնչառության մարմնավորմամբ (Հվի 6:57, 63, 20:22):
2. Քանի որ Գրվածքներն Աստծու դուրս փչածն են, Աստծու արտաշնչածը (Բ Տմք 3:16), մենք պետք է ներշնչենք Գրվածքները՝ ընդունելով Աստծու խոսքը ամեն աղոթքի միջոցով (Եփս 6:17-18). երբ ուսուցանում ենք Աստվածաշունչը, պետք է Աստծուն արտաշնչենք մարդկանց մեջ:
3. Որպեսզի լիովին տիրենք Քրիստոսին՝ որպես բարի երկրի, պետք է պահպանենք Տիրոջ հետ մեր թարմությունն ու նորությունը՝ օր օրի ստանալով Նրա նոր խոսելը մեզ հետ (Ողբ 3:22-24, Երկ Օր 34:7, Հռմ 7:6, Երմ 15:16). մենք պետք է զգուշանանք երկրում ընդարմանալուց (Երկ Օր 4:25). «ընդարմանալ» բառը ենթադրում է «հոգևոր թարմության կորուստ և սկզբնական տպավորությունների բթացում, ինչն առաջանում է սովորության կամ նույն տեղում երկար մնալու պատճառով» (Ս. Ռ. Դրայվեր):
4. Եթե սիրում ենք Աստծուն, խոնարհեցնում ենք մեզ և գալիս ենք Տիրոջը՝ որպես կենդանի խոսքի Նրա գրված խոսքում՝ աղոթքարձեղցելով Նրա Խոսքը, նա մեզ համար դառնում է Հոգու կիրառված խոսք. Նրա ակնթարթային խոսքերը մեզ համար հոգի ու կյանք են մեր մատակարարման ու սնուցման համար. մենք Աստծու խոսքերի միջոցով ներարկվում ենք Նրա էսհիմքով և Աստծու հետ մեկ ենք դառնում կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, Նրա փառքի, Նրա արտահայտության համար՝ Հվի 5:39-40, 6:57, 63, Եփս 5:26-27:

### **IV. Աստծու տված նորոգված ուսուցումը Իր պատվերն էր Իր ժողովրդին ինը բաներում.**

- Ա. Մենք պետք է Տիրոջից երկյուղենք. Տիրոջից երկյուղելը Նրան վիրավորելուց, Նրա ներկայությունը կորցնելուց և գալիք դարաշրջանում Նրան՝ որպես մեր պարզևի, չստանալուց վախենալն է. մենք պետք է վախենանք Տիրոջ ժպիտն այս դարաշրջանում և Նրա պարզևը գալիք դարաշրջանում կորցնելուց՝ Առկ 1:1, 7, Եփս 4:30, Բ Կրթ 5:9-10:
- Բ. Մենք պետք է քայլենք Աստծու ճանապարհներով. այն, ինչ Աստված է, ճանապարհ է մեզ համար. հետևաբար որպես մեր ճանապարհներ ընդունել այն, ինչ Աստված է, և այդ ճանապարհներով քայլել նշանակում է ապրել Աստծուն, ապրել Քրիստոսին. Քրիստոսին՝ որպես մեր ճանա-

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

պարհի, ընդունել նշանակում է ապրել Նրան, իսկ Նրան ապրել նշանակում է արտահայտել Նրան, մեծարել Նրան՝ Հվի 14:6, Փլյ 1:19-21ա:

- Գ. Մենք պետք է սիրենք Տեր Հիսուսին. ով մեր Աստված է (Հվի 20:28). քանի որ Աստված սիրում է մեզ և Իր գործովն է ուղղել մեզ (Երկ օր 10:15, Երմ 31:3), մենք պետք է սիրենք Նրան ի պատասխան և մեր գործովը Նրան ուղղենք (Ա Կրթ 2:9):
- Դ. Մենք պետք է Աստծուն սիրենք ու Նրան ծառայենք մեր ողջ սրտով ու մեր ողջ շնչով. մեր սիրտը կապված է մեր հոգու հետ, որովհետև մեր խիղճը, որը մեր հոգու գործառույթներից մեկն է (Հոմ 9:1), նաև մեր սրտի գործառույթն է (Եբր 10:22). այսպիսով՝ Աստծուն մեր ողջ սրտով ու շնչով սիրել ու ծառայել նշանակում է, որ մենք Նրան սիրում և ծառայում ենք նաև մեր հոգով (Հոմ 1:9), որը սիրո հոգի է (Բ Տմբ 1:7):
- Ե. Մենք պետք է Նրա պատվիրաններն ու կանոնակարգերը պահենք մեր բարիքի համար. դա նշանակում է, որ այսօր մենք պետք է «պահենք Քրիստոսին»՝ որպես Աստծու պատվիրանների իրականության, և մեզ սպասավորած Քրիստոսի հարստությունը, որպեսզի օրհնվենք՝ Երկ օր 10:13:
- Զ. Մենք պետք է թլփատենք մեր սրտի թլփիր, դա նշանակում է, որ մենք խաչում ենք մսեղին (Գղտ 5:24), այսինքն՝ այն ամենը, ինչ մենք ենք և ունենք մեր բնական էության մեջ, ապրելով ու ծառայելով մեր վերածնված հոգուն (Հոմ 1:9, 2:28-29, 7:6, 8:4, 16). սա մեզ դարձնում է ճշմարիտ «թլփատությունը... որ Աստծու Հոգով ենք ծառայում, Քրիստոս Հիսուսով ենք պարծենում և մսեղիին վստահ չենք» (Փլյ 3:3):
- Է. Մենք այլևս չպետք է խստապարանոց լինենք. մեր խստապարանոցությունը խորհրդապատկերում է մեր համառ ու ապստամբ կամքը (Երկ օր 31:27), որը պետք է ենթարկեցվի ու հարուցանվի Քրիստոսի կողմից՝ Իր՝ որպես փոխակերպող Հոգու միջոցով, որպեսզի դառնա մեր գեղեցկությունը Նրան մեր հնազանդվելու մեջ (Երգ 1:10, Փլյ 2:13):
- Ը. Մենք պետք է կառչենք Քրիստոսին՝ որպես Աստծու ողջ պատվիրանի. այդժամ մենք կամրապնդվենք և կքաջալերվենք, որպեսզի առաջ շարժվենք և տիրենք Քրիստոսին՝ որպես մեր բարի երկրի (Երկ օր 11:8, 24). դա նշանակում է, որ մենք ձեռք կբերենք Քրիստոսին (Փլյ 3:8). ավելին՝ մեր օրերը կերկարեն Քրիստոսի մեջ (Երկ օր 11:9, 21). Աստծու աչքերը մեզ վրա կլինեն, որպեսզի հոգան մեզ համար և մեզ տան Նրա ներկայության օրհնությունը (Խ. 12), և մենք կվայելենք երկնային անձրևը, Հոգու ոռոգումը, որպեսզի հավաքենք Քրիստոսի բերքը (Խխ. 14-15):
- Թ. «Նրա անունով երդվիր: Նա քո գովքն է, և Նա քո Աստված է, ով քեզ համար այս մեծ ու ահարկու բաներն արեց, որ տեսան քո աչքերը» (10:20բ-21). եթե խոսենք նորկտակարանյան եզրույթներով և փորձառության լույսի ներքո, սա նշանակում է, որ մենք կանչում ենք Տիրոջ անունը, որպեսզի վայելենք Նրա օրգանական փրկությունն ու անքննելի հարստությունը (Հոմ 10:12-13):